ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- դեկտեմբերի 2021 թվականի №---Ա
ք. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի սեպտեմբերի 10-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով վերանայել Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 11-ի №301Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ համարելով, որ առկա չէ Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի (այսուհետ՝ ԼՋ №0001 լիցենզիա) պայմանների 11-րդ կետի խախտում, հետևաբար Ընկերությունը չի կարող կատարել Որոշման պահանջները: Վերջինս վերահաստատել է «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Դիմող անձ) կողմից Արզական-Երևան ջրատարին միանալու կամ պայմանագրի հիման վրա դրա օգտագործումը թույլատրելու առաջարկի մերժման վերաբերյալ նախկինում ներկայացրած իր դիրքորոշումը, որով, իր գնահատմամբ, հիմնավորվել է հիշյալ մերժումը: Որպես մերժման պատճառներ՝ Ընկերությունը ներկայացրել է հետևյալը.

1) փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման համար Դիմող անձին Արզական-Երևան ջրատարին միանալը թույլատրելու դեպքում վտանգվում է Ընկերության՝ սեփական կարիքների համար էլեկտրական էներգիա արտադրելու և դրա միջոցով մատուցվող ծառայությունների սակագների բարձրացումը զսպելուն ուղղված հեռանկարային ծրագրի

իրագործումը: Արդյունքում ստացվում է, որ առաջնահերթություն է տրվում ոչ թե հանրային շահին, այլ կոնկրետ բիզնես ծրագրով շահույթ ստանալուն.

2) Ընկերությունը հրաժարվել է Արզական-Երևան ջրատարի վրա «ռեակտիվ» տիպի հիդրոտուրբիններով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցումից, քանի որ բացի այն, որ այդ տիպի հիդրոտուրբինները դեռևս լայն կիրառում չունեն և ռիսկային են շահագործման տեսանկյունից, ռիսկային են նաև Արզական-Երևան ջրատարի մոտ 17,0 կմ սկզբնական հատվածի թողունակության փոքրացման առումով, որով ներկայումս տեղափոխվում է մինչև 1700,0 լ/վ ջրաքանակ: Նշված հիմնավորումը թույլ է տալիս եզրակացնելու, որ նման պայմաններում Արզական-Երևան ջրատարի մոտ 17,0 կմ սկզբնական հատվածի թողունակության փոքրացումը կարող է վտանգել Ընկերության կողմից ծառայությունների մատուցումը: Ընդ որում, Ընկերության կողմից ներկայացված վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակում Դիմող անձի ներկայացրած՝ Արզական-Երևան ջրատարի վրա փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու հնարավորության վերաբերյալ «ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրությունը դիտարկվել է որպես մասնագիտական կարծիք և մերժվել Ընկերության ներկայացրած վարչական բողոքը, թեև այն «որպես մասնագիտական կարծիք չի կարող համարվել՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթների»,

3) Ընկերությունը հանդիսանում է համապատասխան համակարգերը շահագործող անձ, ուստի առանց պետական սեփականություն հանդիսացող գույքի սեփականատիրոջ համաձայնության չի կարող տրամադրել պահանջվող թույլտվությունը: Գույքի սեփականատիրոջ համաձայնությունը պարտադիր առկա լինելու վերաբերյալ դիրքորոշում հայտնել է նաև գույքի վարձատուն՝ ջրային կոմիտեն.

բ. սույն թվականի սեպտեմբերի 10-ից հարուցվել է Որոշման վերաբերյալ բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 13-ի №ՍԱ/34.1-Մ2-5/3130-2021 գրությամբ ծանուցվել են Ընկերությունը, Դիմող անձը և ջրային կոմիտեն,

գ. Հանձնաժողովը սույն թվականի օգոստոսի 16-ի №ԳԲ/34.1-Մ2-5/2782-2021 և սեպտեմբերի 17-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3063-2021 գրություններով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկացրել է ստեղծված իրավիճակի մասին՝ ներկայացնելով գործող իրավակարգավորումները, և հայտնել, որ եթե որպես իրավասու մարմնի՝ վերջինիս գնահատմամբ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միանալու կամ պայմանագրի հիման վրա դրա օգտագործումը թույլատրելու յուրաքանչյուր առանձին դեպքի համար անհրաժեշտ է նաև գույքի սեփականատիրոջ համաձայնությունը, ապա անհրաժեշտ է այդ առնչությամբ համապատասխան փոփոխություն կատարել Վարձակալության պայմանագրում, ինչից հետո Հանձնաժողովը կնախաձեռնի ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների քննարկվող կետի փոփոխության գործընթաց: Մինչդեռ, ի պատասխան նշվածի՝ ստացվել է ջրային կոմիտեի 2021 թվականի օգոստոսի 30-ի №01/05/3585-2021 գրությունը, որի համաձայն՝ Դիմող անձին ջրային համակարգին միանալու կամ պայմանագրի հիման վրա դրա օգտագործումը թույլատրելու գործընթացում բացակայում է ջրային կոմիտեի համաձայնությունը, որպիսի պայմաններում Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառումը նպատակահարմար չէ, իսկ նկատի ունենալով, որը Որոշման 1-ին կետն ածանցվում է 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներից, այն նույնպես կիրառելի չէ: Նույն դիրքորոշումն արտահայտել է նաև Նախարարությունը՝ Հանձնաժողովին ուղղված 2021 թվականի սեպտեմբերի 10-ի №ԳՍ/15.3/23461-2021 և սեպտեմբերի 29-ի №ԳՍ/15.3/25232-2021 գրություններով,

դ. Հանձնաժողովի գնահատմամբ ջրային կոմիտեի և Նախարարության ներկայացրած դիրքորոշումը չի բխել գործող իրավակարգավորումներից, ինչպես նաև նկատի ունենալով, որ Կառավարության, Ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) կողմ հանդիսանում է Կառավարությունը, Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական

վարույթի մասին» օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածները, վարչական վարույթի շրջանակում փոխօգնության կարգով 2021 թվականի հոկտեմբերի 5-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3379-2021 և 2021 թվականի նոյեմբերի 9-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3780-2021 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ներկայացնելով ստեղծված իրավիճակը և խնդրելով հայտնել Կառավարության դիրքորոշումը հարցի առնչությամբ, այդ թվում՝ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միանալու կամ պայմանագրի հիման վրա օգտագործումը թույլատրելու համար, Վարձակալության պայմանագրի շրջանակում, ջրային կոմիտեի համաձայնության անհրաժեշտության վերաբերյալ: Միաժամանակ, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկու անգամ երկարաձգվել է 30-ական օրով,

ե. ի պատասխան Հանձնաժողովի հիշյալ գրությունների՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2021 թվականի նոյեմբերի 11-ի №02/12.8/38912-2021 գրությամբ Հանձնաժողովը տեղեկացվել է, որ հարցի առնչությամբ անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսոհետ՝ Արդարադատության նախարարություն) ներկայացրած կարծիքով (արտահայտված կից 2021 թվականի նոյեմբերի 2-ի №/10.1/35396-2021 գրությամբ), որի համաձայն՝ վերջինս վերլուծելով Վարձակալության պայմանագրի ԸՊ 4.1(2) և ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետերը, փաստել է, որ Ընկերության կողմից փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլատարումը կարող է մերժվել միայն այն պարագայում, երբ առկա չէ տեխնիկական հնարավորություն, այն վտանգում է ծառայությունների մատուցմանը կամ հանգեցնում է լիցենզիայի պայմանների կամ օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Արդարադատության նախարարությունը ընդգծել է, որ ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետում սահմանված հիշյալ հիմքերը սպառիչ են: Մեկնաբանման *expressio unius* կանոնի համաձայն՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով: Հետևաբար, փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլատրումն Ընկերության կողմից կարող է

մերժվել բացառապես Լիցենզիայի պայմանների 11-րդ կետում ամրագրված հիմքերի շրջանակներում:

Անդրադառնալով Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառելիության առնչությամբ ջրային կոմիտեի և Նախարարության արտահայած դիրքորոշումներին՝ Արդարադատության նախարարությունը փաստել է, որ վերջիններիս ներկայացրած հիմնավորումները բավարար չեն: Այսպես, ջրային կոմիտեն և Նախարարությունն իրենց վերլուծությունում հիմնվում են այն հանգամանքի վրա, որ Դիմող անձի՝ փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միանալու և դրա օգտագործման առնչությամբ առկա չէ ջրային կոմիտեի համաձայնությունը: Միաժամանակ, ինչպես Վարձակալության պայմանագրի, այնպես էլ ԼՋ№0001 լիցենզիայի դրույթներից բխում է, որ Ընկերության կողմից փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլատարումը կարող է մերժվել այն պարագայում, երբ դա կհանգեցնի լիցենզիայով կամ օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Ուստի, ջրային կոմիտեի համաձայնության անհրաժեշտությունը կարող է հիմնավորվել միայն համապատասխան նորմատիվ հիմքի վկայակոչմամբ,

զ. իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետը, որի համաձայն՝ լիցենզավորված անձը տեխնիկական հնարավորությունների դեպքում պարտավոր է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը, եթե այն չի վտանգում ծառայությունների մատուցումը, չի հանգեցնում լիցենզիայի պայմանների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Լիցենզավորված անձի կողմից սահմանված՝ ջրային համակարգին միացման պահանջները պետք է լինեն հրապարակային, հիմնավոր և ոչ խտրական,
- Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզավորված անձանց կողմից

սույն օրենսգրքի դրույթների, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իր իրավասությունների սահմաններում իրավասու է տալու խախտումները վերացնելու հանձնարարականներ և կիրառելու տուժանքների տեսակներ.

2) Որոշումն ընդունվել է օրենքներին ու գործող այլ իրավակարգավորումներին համապատասխան, և դրա վերանայման հիմքերը բացակայում են: Մասնավորապես,

- Որոշումը կայացվել է Ընկերության կողմից Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 23-ի №248Ա որոշման 2-րդ կետի պահանջի խախտման՝ Հանձնաժողովի կողմից արդեն 2-րդ անգամ սահմանված ժամկետում ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետին համապատասխան Դիմող անձին փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտվության չտրամադրման հիմքով: Մասնավորապես՝ հիշյալ իրավակարգավորման համաձայն՝ Ընկերության կողմից Դիմող անձին փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլատրումը կարող էր մերժվել միայն այն պարագայում, եթե առկա չէ տեխնիկական հնարավորություն, եթե այն վտանգում է ծառայությունների մատուցումը, հանգեցնում է լիցենզիայի պայմանների կամ օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Ընդ որում, հիշյալ հիմքերն սպառիչ են, և Ընկերության կողմից համապատասխան թույլտվության տրամադրումը կարող էր մերժվել բացառապես այդ հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում, ինչն արդարացիորեն փաստվել է նաև Կառավարության դիրքորոշման շրջանակում՝ Արդարադատության նախարարության կողմից: Մինչդեռ Ընկերությունը, Հանձնաժողովին ուղղված իր որևէ գրությամբ, այդ թվում՝ վարչական բողոքով չի հիմնավորել վերը նշված հանգամանքների առկայությունը: Ընդհակառակը, Ընկերությունն ի սկզբանե համապատասխան թույլտվության չտրամադրումը հիմնավորել է նույն ջրատարի նույն հատվածում փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու իր մտադրությամբ, ինչը, սակայն, չի բխում ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների

11-րդ կետի պահանջից (Ընկերության կողմից առ այսօր Հանձնաժողով չի ներկայացվել նաև քննարկվող հատվածում կառուցման ենթակա փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու հայտ): Այսինքն՝ Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել Որոշման ընդունմամբ որևէ իրավակարգավորման խախտման հանգամանքը, վերջինս որևէ կերպ չի ապացուցել և չի հիմնավորել իր կողմից մատնանշված հանգամանքների առկայությունը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ավելին, նույն հարցի առնչությամբ իրականացված վարույթի արդյունքում ձեռք բերված մասնագիտացված կազմակերպության՝ «ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ հավաստվում է համապատասխան պայմանների ապահովման դեպքում քննարկվող թույլտվության տրամադրման տեխնիկական հնարավորությունը և դրանով ծառայությունների մատուցման չվտանգման հանգամանքը, որի առնչությամբ Ընկերությունը որևէ հակափաստարկ չի ներկայացրել: Ինչ վերաբերում է Որոշման դեմ ներկայացված վարչական բողոքում արտահայտված Ընկերության պնդմանը, թե իբրև «ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված գրությունը «որպես մասնագիտական կարծիք չի կարող համարվել՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթների», ապա այն միանգամայն անհասկանալի է և չհիմնավորված,

- Ընկերության կողմից ներկայացված փաստարկներն անհիմն են և որևէ կերպ չեն կարող դիտվել որպես Դիմող անձին փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտվության չտրամադրման օբյեկտիվ պատճառներ, հիշյալ թույլտվությունն առկա պայմաններում ենթակա է տրամադրման:

Անդրադառնալով առանց համապատասխան համակարգերի սեփականատիրոջ (ի դեմս ջրային կոմիտեի) համաձայնության, պահանջվող թույլտվության տրամադրման անհնարինության մասին Ընկերության պնդմանը՝ Հանձնաժողովը փաստում է, որ հիշյալ հանգամանքը ևս որևէ կերպ չի կարող դիտվել որպես պահանջվող թույլտվության չտրամադրման հիմնավորում, քանզի գործող կարգավորումների շրջանակում այդ համաձայնությունը տվյալ իրավիճակում չի պահանջվում: Ընկերության նշված պնդումը, ինչպես նաև ջրային կոմիտեի և Նախարարության արտահայտած նույն կարծիքն առարկայազուրկ են, քանզի Վարձակալության պայմանագրի ԸՊ 4.1(2) և ԸՊ 7.1(1) կետերի ուժով փոքր հիդրոէլեկտրակայաններին ջրային համակարգերն օգտագործման կամ դրանց միացման թույլտվությունների տրամադրման բոլոր դեպքերում արդեն իսկ առկա է վարձատուի համաձայնությունը, եթե այն իրականացվում է ԼՋ№0001 լիցենզիայի պայմաններին համապատասխան, և յուրաքանչյուր առանձին դեպքի համար կրկնակի համաձայնություն չի պահանջվում: Նշվածը հավաստվել է նաև սույն վարույթի շրջանակում ստացված՝ ջրային համակարգերի սեփականատիրոջ անունից հանդես եկող և Վարձակալության պայմանագրի կողմ հանդիսացող Կառավարության դիրքորոշմամբ.

3) Որոշման փոփոխման կամ բեկանման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասը, Հանձնաժողովը որոշում է.

1. Մերժել Ընկերության 2021 թվականի սեպտեմբերի 10-ի վարչական բողոքը՝ Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 11-ի №301Ա որոշումը վերանայելու վերաբերյալ:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի

կառուցման և շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան դրանով սահմանված ժամկետում կատարման, և դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը: Այն սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2021թ.